ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱԽՈՒՇՏԻ ԱՐՔԱՅԱԶՆԻ ԵՐԿՈՒՄ

ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

17-րդ դարում և 18-րդ դարի առաջին քառորդին Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների սոցիալ-տնտեսական կյանքի, բնակչության էթնիկ կազմի, քաղաքական զարգացումների մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Վախուշտի Արքայազնի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը[1]: Հատկապես գրքի աշխարհագրական մասը[2] հարուստ է երկրագործության, անասնապահության, օգտակար հանածոների, բնակավայրերի, ճանապարհների, վարչատարածքային բաժանման, պատմական աշխարհագրության, նյութական մշակույթի հուշարձանների, տեղանվանագիտության, էթնիկ կազմի, լեզվի, կրոնի, մշակույթի, սովորույթների, ավանդույթների վերաբերյալ տեղեկություններով: Ընդ որում՝ աշխատանքը շարադրելու եղանակը, այն է՝ վարչաքաղաքական միավորների նկարագրությունը, հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու երկրամասերում տնտեսության ճյուղերի զարգացածության աստիճանի, սոցիալ-տնտեսական վիճակի, առանձին բնակավայրերի կամ շրջանների բնակչության բարքերի մասին, որոնք կարևոր սկզբաղբյուր են այդ ժամանակաշրջանում ինչպես Վրաստանի, այնպես էլ մասամբ - Հայաստանի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:

Քաղաքական ու պատմական աշխարհագրությունը Վախուշտի Արքայազնի աշխատության կարևոր բաղադրիչներից է, որը շարադրված է հեղինակի անձնական այցելությունների ու ուսումնասիրութ-

---

[1] Վախուշտի Արքայազն (մոտավորապես 1696-1757 թթ.)՝ վրաց հայտնի պատմաբան ու աշխարհագրագետ, Քարթլիի Վախթանգ 6-րդ արքայի արտամուսնական որդին: Երկը հրատարակվել է Քարթլիս Ցխովրեբայի չորրորդ հատորում՝ տե՛ս (ქართლის ცხოვრება, ტომი 4, ბატონიშვილი ვახუშტი აღწერა სამეფოსა საქართველოსა, თბილისი, 1973):

[2] Աշխատության այդ մասը նվիրված է Վրաստանին և դիտվում է որպես հավելում նրա հիմնական պատմական աշխատանքի: Ձեռագիր բնօրինակում աշխարհագրական մասերը հաջորդում են պատմական մասերին՝ հեշտացնելով դրանց ընկալումը: Վախուշտիի առաջին ուսումնասիրող Մ. Բրոսսեն նշում է, որ աշխատանքը բաղկացած է բոլորովին անկախ և ինքնուրույն երկու՝ պատմական ու աշխարհագրական մասերից՝ հատկապես կարևորելով երկրորդը՝ աշխարհագրականը (տե՛ս **Tsarévitch Wakhoucht**, Description géographique de la Géorgie, d'après l'original autographe, Saint-Pétersbourg, 1842): Բացառությամբ առաջին և երկրորդ գլուխների, Վրաստանի աշխարհագրական նկարագրության մասը կարելի է դիտարկել և ուսումնասիրել որպես առանձին աշխատություն: Մեր օգտագործած Քարթլիս Ցխովրեբայի հրատարակությունը ներառում է Վախուշտիի աշխատանքի պատմական, աշխարհագրական մասերը և ժամանակագրությունը:

յունների հիման վրա: Հեղինակը ներկայացնում է ինչպես ամբողջ Վրաստանի, այնպես էլ վրացական պետական կազմավորումների վարչական կազմում գտնվող հայկական երկրամասերի (Աշոցք (Աբոցի), Տաշիր, Ղազախ, Փամբակ (Բամբակի), Լոռի (Լոռե), Ջավախք (Ջավախեթ)) վարչատարածքային կառուցվածքին ու սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող տեղեկություններ: Վրացական թագավորությունների ու պետական կազմավորումների շարքում ուսումնասիրվող ժամանակաշրջանում կենտրոնական դեր ուներ Քարթլիի թագավորությունը: Ըստ Վախուշտի Արքայազնի՝ այն բաժանված էր չորս զորավարությունների (սադրոշո, սասպասպետո), որոնց բաժանման հեղինակ համարվում էր Վախթանգ արքան[3]: Հավանաբար վերջինս միայն որոշակի փոփոխություններ էր կատարել և նման վարչաբաժանում գոյություն է ունեցել դեռևս մինչև նրա գահակալումը: Այդ մասին փաստում է Վախուշտին իր աշխատանքի մեկ այլ հատվածում՝ նշելով, որ այս բաժանումը կատարվել է 16-րդ դարի առաջին տասնամյակներին՝ Դավիթ Ժ (1505-1524թթ.) արքայի ձեռամբ (էջ 396):

Հայկական տարածքներից Աշոցքը, Լոռին, Փամբակը, Տաշիրը գտնվում էին գլխավոր համարվող Սոմխիթ-Սաբարաթինո զորավարության կազմում, որը իր հերթին բաժանված էր երկու հիմնական մասերի: Հայկական այդ տարածքները, բացառությամբ Աշոցքի, գտնվում էին այս զորավարության հարավային մասում, որը Դմանիսի, Բոլնիսի ու մի քանի այլ շրջանների հետ կոչվում էր Սոմխիթ[4]:

Հավելենք, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում Լոռին ոչ միշտ է եղել Քարթլիի կազմում: Դեռևս Շահ Աբասը այն դուրս էր բերել Քարթլիի թագավորության վարչական կազմից և կառավարման հանձնել դավանափոխ հայ իշխանի՝ ստեղծելով այնտեղ մելիքություն, որը, կախված արտաքին պայմաններից, երբեմն հայտնվում էր Քարթլիի կազմում, երբեմն ենթարկվում Գանձակի խանությանը կամ անմիջապես շահական իշխանություններին, իսկ 16-րդ դարի 80-ական թթ. որոշ ժամանակով զավթված էր թուրքերի կողմից:

Սամցխե սաաթաբագոյի (աթաբեկություն) կազմում էին գտնվում

---

[3] Վախթանգ 6-րդ.՝ Քարթլիի արքայի տեղապահ, ապա թագավոր՝ 1703-1724 թթ.: 1712-ից 1719 թթ. հեռացվել է իշխանությունից Իրանի շահի հրամանով և գտնվել Իրանում (տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი 4, გვ., 312, 504: Այսուհետև այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ, նշելով միայն էջը):

[4] Վրացական պատմագիտական գրականության մեջ շրջանառվող տեսակետի համաձայն՝ Սոմխիթը կապ չունի Սոմխեթ-Հայաստանի հետ և առանձին տեղանուն է, սակայն, ի հակադրություն այս տեսակետի, վրացական միջնադարյան գրեթե բոլոր աղբյուրները Սոմխիթ նշելով նկատի են ունեցել հենց Հայաստանը (մանրամասն տե՛ս **Խ. Թորոսյան**, Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Եր., 1992, էջ 116-166): Վախուշտին ևս չի օգտագործում Սոմխեթ–Հայաստան եզրույթը, այլ կիրառում է Սոմխիթ-Քարթլի տեղանունը: Վստահաբար կարող ենք պնդել, որ այս եզրույթի կիրառումը Վախուշտիի աշխատանքում ցույց է տալիս հայերով բնակեցված ու հայերին պատկանող այն տարածքը, որը գտնվել է Քարթլիի վարչական կազմում:

Ջավախքը, Կղարջքը (Կլարջեթ), Տայքը (Տաո): Սամցխեի աթաբեկութ-յունը չէր մտնում Քարթլիի վարչական կազմի մեջ և մինչև օսմանյան ռազմակալումը պետական-վարչական առանձին միավոր էր, իսկ ու-սումնասիրվող ժամանակահատվածում ենթակա էր Թուրքիայի տիրա-պետությանը ու արդեն այս շրջանում առավել հայտնի էր Ախալցխեի վիլայեթ անունով: Չնայած այս հանգամանքին՝ Վախուշտին, նշելով, որ Սամցխեն գտնվում է Օսմանյան կայսրության կազմում ու հայտնի է Ախալցխեի վիլայեթ անունով, շարունակում է կիրառել Սամցխե սաաթաբագո եզրույթը (էջ 695):

Ինչ վերաբերում է Վախուշտիի աշխատանքում առկա տեղանուն-ներին, դրանք կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբի՝

1. իր ժամանակ տարածված անվանումներ,
2. դեռևս գործածվող, սակայն հետզհետե իրենց տեղը զիջող տեղանուններ, ինչպես Սամցխե սաաթաբագոյի դեպքում,
3. գործածությունից դուրս մղված ու մոռացված տեղանուններ, որոնց հեղինակը հանդիպել է ձեռագիր և այլ աղբյուրներում: Որպես օրինակ նշենք Պալակացիոս լիճը, որը ներկայումս Չլդր է կոչվում, իսկ հայկական ավելի վաղ շրջանի աղբյուր-ներում տարածված է Ծովակ Հյուսիսո ձևը[5]: Վախուշտիի օգ-տագործած Պալակացիոս ձևը հանդիպում է հին հունական աղբյուրներում,
4. գետեր, լճեր, լեռներ, բնակավայրեր, որոնց անվանումը չի-մանալով՝ հեղինակը ինքն է անուն տվել: Հեղինակի ատլաս-ների օգնությամբ հնարավոր է պարզել նման տեղանունների մեծ մասի դիրքը ու այլ աղբյուրների հետ համեմատելով՝ նաև իրական անվանումը:

Հարկ է արձանագրել, որ թեև Վախուշտին իր աշխատանքի հիմ-նական մասը հեղինակել է 18-րդ դարի 40-ական թվականների առա-ջին կեսին, նրա հաղորդած սոցիալ-տնտեսական, վարչական կառուց-վածքի մասին տեղեկությունները հիմնականում վերաբերում են մինչև 18-րդ դարի 20-ական թթ. առաջին կեսին: 1723-1724 թթ. թուրքական ներխուժումից ու ռազմակալումից ու լեզգիական կրկնվող արշավանք-ներից հետո ոչ միայն տարածքի վարչական կառուցվածքը, այլև էթնիկ կազմը զգալի փոփոխություններ կրեց: Դա չէր կարող չանդրադառնալ նաև տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Այս նույն ժամանակահատ-վածում Վախթանգ արքայի արքունիքի հետ Ռուսաստան տեղափոխ-ված Վախուշտին չէր կարող տիրապետել այնպիսի տեղեկությունն-

[5] Ծովակ Հյուսիսո, Բալակացիոս, Ծովակ, Ճըլդր, Չալդր, Չալդրը գյոլ, Չալդիր, Չլդրի լիճ… Պալակացիոս, Պալակացիս – Լիճ Հայկական լեռնաշխարհում, Կուր գետի վերին հոսանքի աջ կողմում, Կարս քաղաքից մոտ քառասուն կիլոմետր հյուսիս… Մ. Խորենա-ցին հիշատակում է Ծովակ Հյուսիսո ձևով, վրաց աղբյուրներում հիշատակվում է Ցելի ձե-վով… (տե՛ս «Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան», հ. 4, Եր., 1998, էջ 861):

րի, ինչպիսիք նա հայթայթում էր Քարթլիում եղած ժամանակ: Բացի այդ՝ Վախուշտին, միաժամանակ լինելով Ստորին Քարթլիի (էջ 504) զորքերի հրամանատար, տեղյակ էր նաև տարածքի վարչական կառուցվածքի ու տնտեսական հնարավորությունների մասին:

Դրանց իսկությունը ճշտելու տեսանկյունից կարևորագույն աղբյուր են 1728 թ. կազմված օսմանյան հարկացուցակները: Դեռևս 1970-ական թվականներին վրացի հետազոտողներ Ս. Ջիքիայի և Ն. Շենգելիայի կողմից մեծ ծավալի աշխատանք է տարվել՝ վերծանելու և թարգմանելու 1728 թ. օսմանյան իշխանությունների կազմած՝ Թիֆլիսի վիլայեթի աշխարհագիր-ցուցակները: Այդ աշխատությունը հրատարակվել է Թբիլիսիում և ընդգրկում է նաև Արևելյան և Հյուսիսային Հայաստանի մի շարք երկրամասեր[6]:

Սակայն այդ հարկացուցակները, ընդհանուր տեղեկություններ տալով հարկերի, տնտեսության ճյուղերի վերաբերյալ, կազմվել են Հարավային Կովկասում քաղաքական ու ժողովրդագրական խոշոր փոփոխություններից հետո ու, թեև ժամանակային ընդմիջումը Վախուշտիի հայտնած տեղեկությունների հետ համեմատած երբեմն չի գերազանցում մի քանի տարին, դրանք, այնուամենայնիվ, ամբողջովին չեն արտացոլում մինչև թուրքական ներխուժումը եղած ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական պատկերը:

Միաժամանակ ուսումնասիրվող տարածքների վերաբերյալ տեղեկություններ ստանում ենք նաև օտարերկրյա ճանապարհորդներից[7], սակայն Վախուշտիի աշխատանքն առանձնանում է երկրի, բնակչության ու տնտեսության մասին առավել մանրամասն տեղեկություններով:

Գյուղատնտեսության մասին հատվածում տեղեկությունների մեծ մասը վերաբերում է հողագործությանը: Հեղինակը նշում է ավելի քան յոթ տասնյակ տեսակի մշակաբույսեր, ու դրանց հիշատակման հաճախակիությունից կարելի է դատել Վրաստանում այս կամ այն մշակաբույսի տարածվածության աստիճանի մասին: Հատկանշական է, որ հեղինակը, անձամբ այցելած չլինելով մի շարք շրջաններ, կարողանում է բավականին մանրամասն նկարագրել տվյալ երկրամասի տնտեսական առանձնահատկությունները: Դրա համար նա օգտագործում է բնական գոտիների մասին իր գիտելիքները: Հավելենք՝ Քարթլիի վարչական կազմում գտնվող հայկական տարածքները, ըստ Վախուշտիի բաժանման, հիմնականում գտնվում են զարգացած անասնապահություն ունեցող մարգագետնային գոտում, բացառությամբ Ղազախ-Շամշադինի, որը լեռնային գոտում էր (էջ 310): Ներկայումս Վրաստա-

---

[6] Տե՛ս 1728 წლის თბილისის ვილაიეთის დიდი დავთარი. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადეს სერგი ჯიქიამ და ნოდარ შენგელიამ. თბილისი: ჰოროსი XXI, 2009-2010:

[7] Հատկապես հարուստ տեղեկություններ է հաղորդում Ժան Շարդենը (տե՛ս **Жан Шарден.** Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг. Тифлис, 1902):

նի, իսկ ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ Ախալցխեի վիլայեթի կազմում գտնվող Ախալցխեն ու շրջակայքը ևս ներառված են այս գոտում: Վախուշտին առանձնացնում է Ջավախքը որպես զարգացած անասնապահությամբ երկրամաս (էջ 671): Հետաքրքրական է, որ հեղինակը նշում է Ստորին Քարթլիում և Սոմխիթում զարգացած խոզաբուծության մասին: Սա իր հերթին հաստատում է տարածքի՝ գլխավորապես քրիստոնյաներով բնակեցված լինելու հանգամանքը: Բացի այդ՝ հեղինակը նշում է, որ Սոմխիթի բնակչության մեծ մասը դավանանքով, այս պարագայում՝ նաև ազգությամբ, հայեր էին, իսկ փոքր մասը՝ «հավատով վրացիներ» (էջ 312), որոնց թվում կարող էին լինել և՛ վրացիներ, և՛ քաղկեդոնական հայեր: Ուսումնասիրվող տարածքներում մահմեդական բնակչությունը զգալի թիվ էր կազմում Շուլավերում ու դրանից հյուսիս՝ հարթավայրային տարածքներում (էջ 313): Թյուրքական այլ ցեղերի կողքին մեծ թիվ էին կազմում բորչալու ցեղի ներկայացուցիչները, որոնց այստեղ բնակեցրել էր Շահ Աբասը (էջ 419-420): Թյուրքական ցեղերի հիմնական զբաղմունքը քոչվորական անասնապահությունն էր: Որպես ամառային արոտավայր նրանք օգտագործում էին Աշոցքի լեռնային գոտին (էջ 313-314): Մանր եղջերավոր անասնապահությունը զարգացած էր Դեբեդի հովտում, Սոմխիթում, -Ջավախքում, Սամցխեում (էջ 306, 309, 670, 674): Դեբեդի հովիտը հողագործության համար բարենպաստ էր: Այստեղ մշակվում էին հացահատիկային մշակաբույսերի բազմաթիվ տեսակներ՝ բրինձ, ցորեն, գարի, վարսակ, այլ մշակաբույսեր՝ ծխախոտ, կանեփ, ինչպես նաև՝ մրգեր ու բանջարեղեն (էջ 306): Այս տարածքը հեղինակը անվանում է «Դեբեդի պարգև» (էջ 306): Վախուշտին նշում է Լոռի-Տաշիրում, Փամբակում ու Թռեղքում (Թրիալեթ) զարգացած մեղվապահության մասին (էջ 313, 308, 320): Իր աշխատանքում Վախուշտին հիշատակում է Վախթանգ արքայի կողմից մի շարք սակավաջուր երկրամասերում, մասնավորապես Սոմխիթի չորային շրջաններում, ոռոգման ցանց անցկացնելու մասին (էջ 312):

Վախուշտին անդրադարձ ունի նաև մետաքսագործությանը, որը, ըստ նրա, եղանակային պայմանների պատճառով Վրաստանում այնքան էլ արդյունավետ չէր: Սակայն պետք է նշենք, որ իրանական մետաքսը Վրաստանում մեծ տարածում ուներ՝ պայմանավորված Վրաստանի տարածքով դեպի Եվրոպա տեղափոխվելու հանգամանքով:

Աշխատանքում կարևոր է նաև օգտակար հանածոների որոշ տեսակների հիշատակումը: Մասնավորապես, Աշոցքում արդյունահանվում էր սպիտակ մարմարատիպ քար (էջ 313-314): Հեղինակը խոսում է նաև Սոմխիթից հյուսիս ընկած տարածքներում երկաթի արդյունահանման ու մշակման (էջ 332), իսկ Քոբերի[8] մոտակայքում նաև պա-

[8] «Վանք և հուշարձանախումբ ՀՀ Լոռու մարզում, Դեբեդի կիրճի ձախ կողմի ժայռագոգին…» («Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան», հ. 4, էջ 425):

բարտանյութերի որոշ տեսակների մասին (էջ 317): Չի շրջանցվում նաև պղնձագործությունը (էջ 316): Հավելենք, որ հեղինակի նշած հանքավայրերը ներկայումս էլ շահագործվում են:

Այսպիսով, դատելով Վախուշտի Արքայազնի հայտնած տեղեկություններից՝ կարելի է եզրակացնել, որ Քարթլիի թագավորության կազմում գտնվող հայկական և հայաբնակ տարածքներում զարգացած էին տնտեսության բոլոր ճյուղերը և ամբողջ Վրաստանի տնտեսական համակարգում շատ դեպքերում ունեին կարևոր դեր: Ռազմավարական կարևորագույն նշանակությունից բացի՝ նաև տնտեսական շահեկան հնարավորություններն էին պատճառը, որ վրացական, թուրքական, պարսկական իշխանությունները շարունակ պայքարում էին այս շրջաններին տիրելու համար:

Բանալի բառեր - *Վախուշտի Արքայազն, պատմական աշխարհագրություն, սոցիալ-տնտեսական տեղեկություններ, հողագործություն, գյուղատնտեսություն, վարչական բաժանումներ, տեղանուններ*

ДАВИД КАРАПЕТЯН – ***Сведения об Армении и армянах в произведении царевича Вахушти.*** – Согласно сведениям царевича Вахушти, армянские территории, входившие в состав Картлийского царства, отличались всесторонним экономическим развитием, были вовлечены в экономику Грузии и во многих случаях занимали в ней ведущее место. В дополнение к стратегическому значению это играло существенную роль в борьбе за господство в регионе, которую вели между собой в первой половине XVIII в. Иран, Грузия и Турция.

Ключевые слова: *царевич Вахушти Багратиони, историческая география, социально-экономическая информация, сельское хозяйство, административное деление, топонимы*

DAVID KARAPETYAN – ***Information about Armenia and the Armenians in the Work of Prince Wakhusht***. – According to the information provided by Prince Wakhusht, the economy of the Armenian territories that were part of the kingdom of Qartli was well-developed, and these territories were involved in the economic system of Georgia, in many cases playing a central role. In addition to a strategic important role, this played a significant role in the struggle for dominance in this region between Iran, Georgia, and Turkey.

Key words: *Prince Wakhusht, historical geography, socio-economic information, cultivation, agriculture, administrative divisions, toponyms*